ԱՐՍԵՆ ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մերձավորարևելյան տարածաշրջանային գործընթացների բաղկացուցիչ մաս են կազմում սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունները: Այս հոդվածում փորձ է արվում ուսումնասիրելու XX դարի վերջին, XXI դարի սկզբին սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունները, որը հնարավորություն կտա պատկերացում կազմելու մի կողմից՝ Թուրքիայի և Սիրիայի, իսկ մյուս կողմից՝ Իսրայելի միջև առկա փոխառնչությունների տրամաբանության մասին մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Սիրիա-իսրայելական հարաբերությունները XX դարի վերջին, XXI դարի սկզբին

Սիրիա-իսրայելական հարաբերությունների հիմքում մշտապես եղել են տարաբնույթ հիմնախնդիրներ (տարածքային պահանջներ, ջրային ռեսուրսների վերահսկողության խնդիր, Մերձավորարևելյան տարածաշրջանում վարվող քաղաքականություն և այլն), որոնք իրենց արտացոլումն են գտել նաև 1990-2002 թթ. երկկողմ հարաբերություններում:

Տարածքային հիմնախնդիրներ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև գաղտնի բանակցությունների ընթացքում Սայքս-Պիկոյի համաձայնագրով[1] Սիրիան և Պաղեստինն ընդգրկվեցին հա-

[1] **Ն. Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն: Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005թթ., Եր., «Զանգակ-97», 2007, էջ 282:

մապատասխանաբար Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի մանդատի ներքո: Ֆրանսիական մանդատային իշխանությունների վերահսկողության տակ անցան նաև Գոլանի բարձունքները՝ փաստացի մնալով Սիրիայի կազմում:

Հետագայում՝ երկրորդ աշխարհամարտի ավարտից և մանդատային իշխանությունների վերացումից հետո, Մերձավոր Արևելքում տարածքային նոր բաժանումներ եղան: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29-ի N 181 բանաձևով սահմանվեցին Իսրայել և Պաղեստին պետությունների տարածքները[2]: 1948 թ. մայիսի 15-ին՝ Իսրայել Պետության հռչակումից հետո, սիրիական բանակը մի քանի այլ արաբական պետությունների զինուժի հետ միասին ներխուժեց հրեական պետության տարածք՝ նպատակ ունենալով խոչընդոտել Իսրայելի ստեղծումը: 1948-49 թթ. ռազմական գործողությունների արդյունքում Սիրիան մնաց միակ արաբական պետությունը, որն իր ձեռքում էր պահում ՄԱԿ-ի կողմից ընդունված բանաձևով Իսրայելի համար նախատեսված հողերի ոչ մեծ հատված[3]: Հետագայում հաշտության բանակցությունների արդյունքում Սիրիայի և Իսրայելի սահմանամերձ որոշ տարածքներ ճանաչվեցին որպես «ապառազմականացված գոտիներ»: Մինչև 1967 թ. «ապառազմականացված գոտիները» մնում էին անդադար բախումների թատերաբեմ սիրիական և իսրայելական զինված ուժերի միջև:

Արաբական որոշ երկրների (այդ թվում՝ Սիրիայի) և Իսրայելի միջև երկրորդ պատերազմը տեղի ունեցավ 1967 թ. հունիսի 5-10-ը («Վեցօրյա պատերազմ»): Իսրայելի կողմից պատերազմ սկսելու պատճառներից էին նաև 1967 թ. սկզբից իսրայելական օբյեկտների հաճախակի ռմբակոծությունները սիրիական օդուժի կողմից: Պատերազմի հետևանքով Իսրայելին անցան Արևելյան Երուսաղեմը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գազան, Սինայ թերակղզին, սիրիա-իսրայելական սահմանամերձ տարածքում գտնվող Գոլանի բարձունքները: 1967 թ. նոյեմբերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց բանաձև, որով Իսրայելից պահանջում էր հեռանալ նվաճված բոլոր տարածքներից[4]:

---

[2] Նույն տեղում, էջ 292-293:

[3] Бар-Он М. Проблемы Голланских высот. – Иерусалим, 1998. – էջ 6.

[4] ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի №242 բանաձև (http://www.eretzisrael.co.il).

Իսրայելը ձգտում էր Գոլանը վերածել տարանցիկ գոտու՝ այնտեղ ստեղծելով քաղաքացիական և ռազմական օբյեկտների ցանց: Փաստորեն դա նշանակում էր, որ Գոլանի բարձունքները պետք է դառնային Իսրայելի անքակտելի մասը, որը նախօրոք կբացառեր դրանց հանձնման հարցը Սիրիային:

1970 թ. նոյեմբերի 13-ի ռազմական հեղաշրջման արդյունքում Սիրիայում իշխանության եկավ Հաֆեզ Ալ-Ասադը, սահմանեց երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Օրակարգում կրկին դրվեց Գոլան բարձունքների վերադարձի հարցը, որը Սիրիայի նոր ղեկավարության կողմից դիտվում էր որպես սեփական իշխանության լեգիտիմացման միջոց: Այդ էր պատճառը նաև, որ Սիրիան մասնակցեց Իսրայելի հետ 1973 թ. պատերազմին: Իսրայելական բանակային ստորաբաժանումները հարձակման ենթարկվեցին եգիպտական զինուժի կողմից Սինայի թերակղզում: Իսրայելական զինուժին հաջողվեց ներթափանցել սիրիական տարածք և պաշարել եգիպտական երրորդ բանակը: Իսրայելական զինուժի մյուս ռազմավարական հաջողությունը Եգիպտոսի Սուեզի ջրանցքի արևմտյան ափի նկատմամբ վերահսկողության հաստատումն էր, որից հետո Եգիպտոսը ստիպված էր զինադադար խնդրել: Չնայած սկզբնական հաջողություններին՝ սիրիական բանակին չհաջողվեց պահպանել իր կողմից ազատագրված Գոլան բարձունքներից արևելք ընկած տարածքները: Եգիպտոսի օրինակին հաջորդեցին նաև արաբա-իսրայելական երրորդ հակամարտություն ներքաշված մյուս արաբական երկրները:

Գոլանի բարձունքների հիմնահարցն առանցքային խընդիրների շարքում է եղել նաև 90-ականներից մինչև 2002 թթ. Սիրիա-իսրայելական հարաբերություններում: Բարձունքների հիմնախնդիրը կարևոր է եղել թե՛ Սիրիայի, թե՛ Իսրայելի ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: Դա պայմանավորված էր առաջին հերթին բարձունքների աշխարհագրական դիրքով, որը հնարավորություն էր տալիս վերահսկելու հարակից երկրի զգալի հատվածը՝ օգտագործելով սպառազինության որոշ տեսակներ: Իսկ այստեղ գտնվող Տիվերիադյան լիճը համարվում էր տարածաշրջանում խմելու ջրի կարևոր աղբյուրներից մեկը:

Իսրայելական հասարակական-քաղաքական ընկալումնե-

ում Գոլանի բարձունքների հիմնախնդիրը[5] տարբերվում է մյուս տարածքային հիմնախնդիրներից հետևյալ հանգամանքներով.

1. ի տարբերություն Գազայի հատվածի կամ Հորդանան գետի արևմտյան ափի՝ Գոլանի բարձունքներում Իսրայելը չի բախվում ժողովրդագրական խնդիրների:
2. Գոլանի բարձունքները ռազմավարական կարևորություն ունեն Իսրայել Պետության համար՝ վերահսկելու խմելու ջրի աղբյուր հանդիսացող Տիվերիադյան լիճը:

Գոլանի բարձունքների հիմնախնդրի հետ կապված սիրիա-իսրայելական հարաբերություններում սիրիական կողմը միշտ իր անհամաձայնությունն է հայտնել հիշյալ բարձունքների հանձնման դիմաց երկկողմ խաղաղության պայմանագիր կնքելուն:

Բացի այդ, Սիրիայի կողմից Գոլանի բարձունքների հիմնախնդրի շահարկումները կապված են եղել տարածաշրջանում իսրայելական (սիոնիստական) բռնազավթողական քաղաքականության լրացուցիչ շեշտման հետ, որի մասին խոսվում է նաև Սիրիայի սահմանադրության նախաբանում[6]:

Ջրային հիմնախնդիրներ: XX դարի վերջին և XXI դարի սկզբին սիրիա-իսրայելական հարաբերություններում, բացի տարածքային վեճից, գոյություն է ունեցել նաև ջրային ռեսուրսների հիմնախնդիրը, որը երկու երկրների համար հանդիսացել է ինչպես սահմանազատման, այնպես էլ անվտանգության ապահովման գործոն: Տարածքային հիմնախնդրի նման ջրային ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը

---

[5] 1981 թ. Իսրայելում ընդունվեց օրենք Գոլանի բարձունքների վերաբերյալ, որով հայտարարվեց Իսրայելի ինքնիշխանությունն ու իրավասությունները հիշյալ տարածքի նկատմամբ (տե՛ս Israel Ministry of Foreigh Affairs, Golan heights law, December 14, 1981. http://www.mfa.gov.il/mfa/foreign-policy/peace/guide/pages/ golan%20heights%20law.aspx (մուտք, 21. 03. 2015 թ.): ՄԱԿ-ի Ախ-ի կողմից 1981 թ. դեկտեմբերի 12-ին ընդունված N 497 բանաձևով Իսրայելի կողմից Գոլանի բարձունքներին առնչվող որոշումները հայտարարվեցին անվավեր և միջազգային իրավարար ուժ չունեցող՝ պահանջելով բռնազավթում իրականացրած Իսրայելից չեղյալ հայտարարել դրանք (տե՛ս UN Security Council Resolutions, http://www.un.org /en/ga/search/view_doc.asp? symbol=S/RES/497(1981) (Մուտք, 03. 05. 2014 թ.):

[6] المقدمة دستور الجمهورية العربية السورية http://syriamoi.gov.sy /new/index.php?req=33&p=14 ,

նույնպես հակասությունների պատճառ է եղել Իսրայելի և Սիրիայի փոխհարաբերություններում: Դեռևս 1967 թ. պատերազմի նախօրեին սիրիա-իսրայելական ռազմական բախումների մեծ մասը տեղի էր ունենում ջրի խնդրի լուծված չլինելու և Հորդանան գետի ջրի հոսքի փոփոխության փորձերի պատճառով:

Իսրայելը ցանկանում էր իր վերահսկողության տակ պահել Բանիասը, որտեղ գտնվում էր Հորդանան գետի երեք հիմնական ակունքներից մեկը (մյուսը գտնվում է Իսրայելում, երրորդը՝ Լիբանանում), ամբողջական վերահսկողություն հաստատել Հորդանան գետի վերին հոսանքի, Տիվերիադյան լճի և այդ ջրային ավազանը շրջանցող ճանապարհի նկատմամբ: Ջրային ռեսուրսների հետ կապված վերոհիշյալ ծրագրերն Իսրայելը փորձում էր իրականացնել դեռևս իր ստեղծման առաջին տարիներից[7]:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա ջրային հիմնախնդրում Դամասկոսը փորձեց ելք ստանալ դեպի Հորդանան գետի վերին և Տիվերիադյան լճի հյուսիսային հատված՝ համաձայնվելով թույլատրել իսրայելցիներին օգտագործել լճի ավազանը հատող ճանապարհը, անգամ եթե այն անցներ սիրիական տարածքներով:

Մերձավորարևելյան տարածաշրջանային և ներպետական այլ գործընթացներ: Բացի տարածքային և ջրային ռեսուրսների վերահսկողության հիմնախնդիրներից, երկկողմանի հարաբերությունների վրա իրենց ազդեցությունն են ունեցել մերձավորարևելյան տարածաշրջանային և ներպետական այլ զարգացումներ:

Իսրայելն անընդհատ բարձրաձայնել է Սիրիայի կողմից ահաբեկչական կառույցների օժանդակության և Մերձավորարևելյան տարածաշրջանում բռնազավթողական քաղաքականության իրականացման խնդիրների մասին: Սա անմիջականորեն կապված էր «Հիզբալլահ» շիական իսլամական արմատական կազմակերպությանը տրվող սիրիական շիա-ալաուիական վարչակարգի օժանդակության և Լիբանանի խնդրի հետ: Սիրիական իշխանությունները մշտապես փորձել են իրենց ազդեցության տակ պահել հարևան Լիբանանը: 1975 թ. քաղաքացիական պատերազմի սկզբում Արաբական երկրների լիգայի թողտվությամբ Լիբանանում հայտնվեցին նաև սիրիա-

[7] أزمة المياه في المنطقة العربية الحقائق والبدائل الممكنة سامر مخيمر خالد حجازي, ١٩٩٦ ,ص ١٩٣.

կան ռազմական ստորաբաժանումներ, որոնք կայունության և խաղաղության ապահովման գործառույթներ էին իրականացնում Լիբանանում ընդհուպ մինչև 2005 թ., երբ Բեյրութում Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունից հետո ներլիբանանյան և արտալիբանանյան որոշ ուժերի ճնշման տակ սիրիական զորքերը ստիպված էին հեռանալ երկրից[8]:

1990-ական թթ. կեսերին սիրիա-իսրայելական հարաբերություններում որոշ տեղաշարժեր նկատվեցին: 1994-95 թթ. Իսրայելի և Սիրիայի միջև բանակցությունները երկու երկրների պաշտոնատար անձանց ոչ մշտական հանդիպումներ են Վաշինգտոնում՝ ԱՄՆ-ի միջնորդությամբ: Իսրայելի վարչապետ Ի.Ռաբինը կողմ էր արտահայտվում Ալ-Ասադի հետ հանդիպմանը, սակայն վերջինս ցանկություն չէր հայտնում անմիջական բանակցություններ վարելու Իսրայելի ղեկավարի հետ: Միևնույն ժամանակ Սիրիայի նախագահն իր հրապարակային ելույթներում և հարցազրույցներում շարունակում էր ընդգծել, որ «Իսրայելը խաղաղ կարգավորման գործընթացի սկզբնավորումից հետո սկսեց խոչընդոտներ հարուցել և անջրպետներ անցկացնել՝ շրջանցելով սկզբունքային հարցերը և խաղաղության պահանջմունքները՝ անընդհատ խուսափելով, երբ պետք էր պարզ արտահայտվել խաղաղ կարգավորման հիմնական դրույթների, ՄԱԿ-ի բանաձևերի կամ «հող՝ խաղաղության դիմաց» բանաձևի վերաբերյալ»[9]:

Այդ փուլում Սիրիան և Իսրայելը միմյանց մեղադրում էին անվճռականության և անհետևողականության մեջ: Միևնույն ժամանակ այդ փոխադարձ մեղադրանքները միայն քողարկում էին երկու երկրների՝ սեփական դիրքորոշումների ավելի լուրջ որոշակիացմանն ուղղված քայլերը: Իսրայելի նպատակներից մեկն էր նաև Գոլաններից նահանջելու դեպքում սեփական անվտանգության ապահովումը: Նա պահանջում էր ոչ միայն այդ գոտու ապառազմականացում, այլ նաև մերձսահմանային գոտուց սիրիական զորքերի հետքաշում և բարձունքներում վաղ տեղեկացման կայաններ տեղակայելու հնարավորություն:

---

[8] **Հովհաննիսյան Ն.,** Արաբական երկրների պատմություն: Հատոր III. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005թթ., «Զանգակ-97», 2006, էջ 642-668:

[9] Из обращения Х. Асада к вооруженным силам Сирии 1 июня 1993 г. (цит. по: Мир глазами президента Асада, М., 2000. с. 106).

Սիրիան այլ նպատակներ էր հետապնդում: Այն Արևմուտքի առջև իրեն պետք է դրսևորեր որպես պետություն, որը չէր աջակցում ահաբեկչությանը, և միևնույն ժամանակ ցույց տար արաբական երկրներին սեփական ունակությունը՝ թելադրելու Իսրայելին խաղաղ կարգավորման գործընթացի իր պայմանները: 1995 թ. սկզբին Իսրայելը ներկայացրեց Գոլանի բարձունքներից իր ուժերի դուրսբերման քառամյա գրաֆիկը: Սակայն Սիրիային ձեռնտու էր իսրայելական զորքերի ամբողջական դուրսբերումից հետո հարաբերությունների կարգավորումը Թել Ավիվի հետ, որը պետք է իրականացվեր առավելագույնը կես տարվա ընթացքում:

Հիշյալ փուլում սիրիա-իսրայելական հարաբերություններում բացասական ազդեցություն ունեցավ 1996 թ. ապրիլին լիբանանյան «Հիզբալլահ»-ի և Իսրայելի միջև հակամարտությունը, որի հետևանքով իսրայելական զինուժը ռմբակոծությունների ենթարկեց շիական իսլամական արմատական խմբավորման կայանատեղիները Հարավային Լիբանանում:

Սիրիա-իսրայելական բանակցային գործընթացի վրա, բացի վերոհիշյալ հիմնախնդիրներից, իրենց ազդեցությունն են ունեցել որոշ ներիսրայելական և ներսիրիական գործընթացներ ևս:

1990-ական թթ. Իսրայելում իշխանության էին գալիս ուժեր, որոնք պատրաստ էին Սիրիային հանձնելու Գոլանի բարձունքները երկու երկրների միջև խաղաղության պայմանագրի ստորագրման դիմաց: Այդ ուղղությամբ առավել ակտիվ աշխատանքներ էին տարվում հատկապես Բենիամին Նեթանյահուի և Էհուդ Բարաքի կառավարություններում, սակայն հիշյալ գործընթացները մերժվեցին սիրիական իշխանությունների կողմից: Ինչպես արդարացիորեն նշում է ԱՄՆ-ում Իսրայելի նախկին դեսպան և Քնեսեթի նախկին պատգամավոր Զալման Շովալը. «Իսրայելի կառավարության գրեթե բոլոր ղեկավարները պատրաստ են եղել բանակցություններ վարելու Գոլանի բարձունքների վերաբերյալ, սակայն վերջնարդյունքում բախվում էին սիրիական կողմի անհամաձայնության հետ»[10]:

1999 թ. ԱՄՆ-ի միջնորդությամբ մի քանի հանդիպումներ ևս եղան Իսրայելի և Սիրիայի միջև: ԱՄՆ-ը Սիրիայի առջև

[10] Shoval Z., Syria hallucinations, President Assad won't be disengaging from Iran or Hizbullah, December 27, 2006, http://www.ynetnews.com/articles/0,7340,L-3344820,00.html.

խնդիր դրեց որոշակիացնել իր դիրքերն անվտանգության խնդիրների, ջրային ռեսուրսների, հարաբերությունների կարգավորման և Լիբանանից սիրիական զորքերի դուրսբերման պայմանների հետ կապված: Սիրիան հրաժարվեց իր կարծիքով երկրորդական այդ հարցերը քննարկելուց, քանի դեռ Իսրայելի նոր վարչապետ Էհուդ Բարաքը չէր հաստատել իր համաձայնությունը Գոլաններից իսրայելական զորքերի դուրսբերման հետ կապված: Փոխզիջումային տարբերակի բացակայության պատճառով 1999 թ. ևս սիրիա-իսրայելական բանակցություններն անօգուտ դուրս եկան և ընդհատվեցին:

2000 թ. Հունիսին՝ Հաֆեզ ալ-Ասադի մահից հետո, Սիրիայի նոր նախագահ ընտրվեց որդին՝ Բաշար Ալ-Ասադը: Իսրայելը հույս ուներ, որ նոր ղեկավարի հետ ավելի հեշտ կլինի փոխպայմանավորվածության հասնել: Սակայն իր առաջին հարցազրույցներից մեկում Բաշար ալ-Ասադը հայտարարեց, որ «պնդելու է Իսրայելի հետ առանց որևէ համաձայնագրի ստորագրման Գոլանի բարձունքների վերադարձի վրա»[11]:

Ճիշտ է, Բաշար ալ-Ասադի վարչակարգի կողմից որոշ շեշտադրումներ եղան սիրիա-իսրայելական հարաբերություններում փոփոխությունների և Իսրայելի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման սիրիական նոր մոտեցումների առումով[12]: Սակայն, մեծ հաշվով, սիրիա-իսրայելական հարաբերություններում զգալի տեղաշարժեր չնկատվեցին: Ընդհակառակը, Սիրիայում Բաշար ալ-Ասադի իշխանության գալով այդ հարաբերություններում սառեցում նկատվեց: Դա կապված էր առաջին հերթին դեպի Իրան Սիրիայի քաղաքական ուղու փոփոխության, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության կողմից Սիրիային տրվող օժանդակության ավելացման հետ: Դա հնարավորություն տվեց Սիրիային ավելացող ռազմաքաղաքա-

[11] The Middle East. July-August 2000, № 30, էջ 7:

[12] Դա հատկապես երևաց 2000 թ. հունվարին Դամասկոսում Արաբ գրողների միության կոնֆերանսում Սիրիայի արտգործնախարար Շարոնի ելույթում: Խոսելով սիրիա-իսրայելական հարաբերությունների մասին՝ Շարոնը հայտարարեց, որ երբ խոսքը ռազմական հակամարտության մասին է, ապա Իսրայելի և արաբների միջև ուժերի հավասարակշռություն գոյություն չունի: Սակայն նա ընդգծեց, որ Սիրիան կարող է ուղղել այդ հակամարտությունը դեպի քաղաքական, տնտեսական, առևտրային և մշակութային մրցակցության ոլորտ, տե՛ս Ալ-Ուսբուա Ալ-Արաբիա, Բեյրութ, 12. 02. 2000:

կան և տնտեսական դերակատարման շնորհիվ առավել ինքնուրույն գործել տարածաշրջանում:

Իսրայելում իշխանության եկած Արիել Շարոնի նոր կառավարության կողմից նույնպես լուրջ քայլեր չձեռնարկվեցին երկու երկրների միջև առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Սիրիա-իսրայելական հարաբերություններում Ա.Շարոնի գլխավորած կառավարության սկզբունքային դիրքորոշումն այն էր, որ սիրիական իշխանությունների հետ բանակցությունները կարող են վերսկսվել միայն այն դեպքում, երբ Սիրիան հրաժարվի օժանդակելուց Իսրայելի կողմից ահաբեկչական համարվող «Համաս», «Հիզբալլահ» իսլամական արմատական խմբավորումներին և Պաղեստինի Ազատագրության կազմակերպությանը[13]:

Հարկ է նշել, որ չնայած սիրիա-իսրայելական հարաբերություններում առկա լարվածությանն ու անվստահությանը, այդ հարաբերությունների սկզբնական փուլում ձեռք բերված որոշ համաձայնություններ կյանքի չկոչվեցին նաև միջնորդ երկրների դիրքորոշման պատճառով, որոնք իրենց՝ հաճախ մրցակցող և հակադրվող շահերն ունեին այս գործընթացներում:

Աշխարհում երկբևեռ համակարգի վերացումն ու միաբևեռ համակարգի ձևավորումը հանգեցրին նրան, որ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացը դուրս եկավ ԱՄՆ-ԽՍՀՄ համընդհանուր դիմակայության ոլորտից: Հիշյալ ժամանակահատվածում արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման ընթացքում նկատվեցին դրական փոփոխություններ, որոնք էին՝ 1992 թ. պաղեստինա-իսրայելական համաձայնությունները (հիշյալ համաձայնությունների գլխավոր դրույթներից էր Իսրայելի կողմից Գազայի հատվածի և Հորդանան գետի արևմտյան ափի աստիճանական հանձնումը պաղեստինցիներին), 1994 թ. հորդանանա-իսրայելական խաղաղության համաձայնագիրը, 1992-95 թթ. Սիրիա-իսրայելական խաղաղ բանակցությունները և այլն: Վերոհիշյալ զարգացումներին ավելացավ ևս մեկը: Հիշյալ ժամանակահատվածում Սիրիան քաղաքական և տնտեսական արդյունավետ հարաբերություններ կառուցեց Մերձավորա-

[13] В.П. Юрченко, Сирия: проблемы национальной безопасности (военная политика и военное строительство в период правления ПАСВ. 1963-2004 гг.), М., Ин-т изучения Израиля и Ближнего Востока. 2004, с. 246.

րևելյան տարածաշրջանի մի շարք երկրների, մասնավորապես Թուրքիայի, Իրաքի և Պարսից ծոցի միապետությունների հետ: ԽՍՀՄ փլուզումն իր ազդեցությունն ունեցավ Սիրիայի և Իսրայելի միջև հարաբերություններում արձանագրված որոշակի դրական տեղաշարժերի առումով: Սակայն, դրան զուգահեռ սիրիական իշխանությունների պահվածքում նկատվեցին Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների խորացման միտումներ՝ որպես Մերձավորարևելյան տարածաշրջանում իսրայելյան և ամերիկյան քաղաքականության հակակշիռ, որով հետագայում պայմանավորվեց երկու երկրների միջև հարաբերություններում առաջընթացի բացակայությունը, ինչն էլ Սիրիային հեռու պահեց Իսրայելի հետ հարաբերությունները խորացնելուց:

Թուրք-իսրայելական հարաբերությունները XX դարի վերջին, XXI դարի սկզբին

Չնայած Թուրքիան և Իսրայելը դիտարկվել են ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի դաշնակից երկրներ Միջերկրածովյան-Մերձավորարևելյան տարածաշրջանում, և հիշյալ պետությունների առնչությունները կրել են ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ սերտ միության ազդեցությունը, այնուամենայնիվ թուրք-իսրայելական հարաբերությունները հարթ չեն ընթացել՝ առաջնորդվելով ռազմաքաղաքական և ռազմատնտեսական սեփական շահերով[14]:

1949թ. Թուրքիան, ճանաչելով Իսրայել Պետությունը, ձգտել է կառուցել իր հարաբերությունները հրեական պետության հետ այնպես, որ չխաթարի իսլամական աշխարհի հետ սեփական առնչությունները:

Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա հրեական պետության ստեղծման առաջին տարիներից անվտանգության ապահովման իսրայելական ռազմավարության կարևորագույն դրույթներից էր տարածաշրջանի ոչ արաբական պետությունների հետ անվտանգության ոլորտում համագործակցությունը: 1958 թ. օգոստոսի 29-ին Իսրայել Պետության առաջնորդ Դավիթ Բեն Գուրյոնի հանդիպումը թուրքական իշխանության ներկայացուցիչների հետ նախադրյալներ ստեղծեց

[14] Государство Израиль. Справочник. М., 1986, с. 104.

երկու երկրների բազմակողմանի համագործակցության համար: 1980-ական թթ. իսրայելական ղեկավար շրջանակները փորձում էին իրականացնել արաբական երկրների մասնատման քաղաքականություն իսլամական աշխարհում ազդեցիկ դիրքեր ունեցող Թուրքիայի միջոցով[15]:

1980-90-ական թթ. տարածաշրջանային հարաբերություններում տեղ գտան առանցքային փոփոխություններ, որոնք պայմանավորված էին սառը պատերազմի ավարտով, ԽՍՀՄ-ի փլուզմամբ և, ըստ էության, երկբևեռ համակարգի փոխարինմամբ միաբևեռ համակարգով: Հիշյալ փոփոխությունները հանգեցրին աշխարհաքաղաքական նոր պայմաններում միջազգային հարաբերությունների տարածաշրջանային նոր համակարգի ձևավորմանը: Այդ գործընթացի բաղկացուցիչ մաս էր կազմում տարածաշրջանային շատ երկրների՝ միմյանց միջև առկա հիմնախնդիրների լուծումը բանակցությունների և փոխադարձ շփումների ճանապարհով տեսնելու ցանկությունը: Հիշյալ փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև թուրք-իսրայելական հարաբերությունների վրա՝ ստիպելով երկու երկրներին ռազմաքաղաքական համագործակցության եզրեր փնտրել: Դրական տեղաշարժեր նկատվեցին հատկապես 1990-ական թթ. սկզբին, երբ ամբողջովին վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև, և վերսկսվեցին փոխադարձ այցելությունները: Սակայն Մերձավորարևելյան տարածաշրջանում այդ տարիներին ընթացող Իսրայել-արաբական երկրներ բանակցային ակտիվ գործընթացների ֆոնին թուրք-իսրայելական շփումները մեծ հաշվով մնացին աննկատ, որոնց մասին և՛ թուրքական, և՛ իսրայելական իշխանությունները չէին շտապում բարձրաձայնել:

Թուրքական քաղաքականության ուղղվածությունը դեպի Իսրայել պայմանավորված էր արաբական երկրների հետ անարդյունավետ հարաբերություններով, մինչդեռ Իսրայելի հետ ռազմական և տնտեսական հարաբերությունները թուրքական իշխանությունները շահավետ էին դիտարկում: Թուրքիան վստահ էր, որ հրեական պետության հետ կապերը հավանության կարժանանան ԱՄՆ-ի կողմից, որի հասարակական-քա-

[15] Иванова И., Турецко-израильские отношения и проблемы региональной безопасности, Ближний Восток: проблемы региональной безопасности. Москва, Институт изучения Израиля и Ближнего Востока, 2000, с. 80–91.

ղաքական շրջանակներում շատ էին լսվում քննադատական կարծիքներ կապված քրդերի հանդեպ թուրքական իշխանությունների բռնությունների և հակաահաբեկչական ուժային գործողությունների հետ:

Բացի այդ, 1990-ական թթ. սկզբին և հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի դերակատարման անկում նկատվեց Արևմուտքի անվտանգության ապահովման ռազմավարություններում: Դա նպաստեց, որ թուրքական իշխանությունները նոր դաշնակիցներ փնտրեն տարածաշրջանում, և այս համատեքստում Իսրայելը Անկարայի համար առավել խոստումնալից և հեռանկարային գործընկեր էր դիտարկվում[16]:

Սիրիայի, Իրաքի և Իրանի աջակցությունը Թուրքիայում Քուրդիստանի աշխատավորական կուսակցության գործունեությանը, Սիրիայի հետ ջրային ռեսուրսների բաշխման հիմնախնդիրը, իրանական վարչակարգի հետ կապված «անհանգստությունը», Թուրքիայի մի շարք հարևանների միջև ընթացող ռազմաքաղաքական համագործակցությունը (Հունաստան-Կիպրոս, Հունաստան-Սիրիա, Հայաստան-Իրան և այլն) ստիպեցին թուրքական իշխանություններին վերանայել իրենց ռազմական հնարավորությունները: Այդ համատեքստում Իսրայելի հետ համագործակցությունը դիտվում էր որպես հակակշիռ վերոհիշյալ երկրների և դրանց միջև ձևավորվող ռազմաքաղաքական համագործակցությունների: Բացի այդ, հարաբերություններ հաստատելով Մերձավոր Արևելքում ամենաժամանակակից զինուժն ունեցող Իսրայելի հետ՝ Թուրքիան ցանկություն ուներ ուժեղացնել և արդիականացնել սեփական ռազմական ներուժը:

Ռազմական համագործակցություն: Իսրայելի համար իսլամական աշխարհում մեծ հեղինակություն ունեցող Թուրքիայի հետ համագործակցությունը հնարավորություն էր տալիս ամրապնդելու սեփական դիրքերը Մերձավորարևելյան տարածաշրջանում՝ փորձելով դուրս գալ քաղաքական շրջափակումից: Դա նաև իսրայելական իշխանությունների համար հնարավորություն էր ստեղծում սեփական արտադրության պաշտպանական և ավիացիոն զինատեսակների իրացման շուկաների առումով: Իսրայելը նաև որոշ ռազմավարական և հետախուզական հնարավորություններ էր ստանում՝ համագործակցելով

[16] The Jerusalem Post, 04.11.1994.

իր նկատմամբ թշնամաբար տրամադրված Սիրիայի, Իրաքի և Իրանի հետ ընդհանուր սահման ունեցող Թուրքիայի հետ:

1990-ական թթ. սկզբում երկու երկրների միջև ռազմատեխնիկական, ռազմաարդյունաբերության և տնտեսական ոլորտներում համագործակցության ակտիվություն նկատվեց, որը բխում էր Թուրքիայի և Իսրայելի ռազմաքաղաքական և ռազմատնտեսական շահերից[17]:

Ռազմաքաղաքական հարաբերություններում ակտիվ քայլեր ձեռնարկվեցին 1993-1994 թթ. պաղեստինա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված ամերիկյան նախաձեռնության ժամանակ, երբ հաճախակի դարձան տարբեր մակարդակներով թուրքական և իսրայելական կողմերի հանդիպումները:

1994 թ. աշնանը Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերը Իսրայել կատարած պաշտոնական այցելության ժամանակ կոչ հղեց իսրայելական իշխանություններին ընդլայնել համագործակցությունը պաշտպանական ոլորտում: Այն միտված էր գլուխ բարձրացնող իսլամական ծայրահեղ արմատական միտումներին դիմակայելուն:

Թուրք-իսրայելական ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում նշանակալի ձեռքբերում էր 1996 թ. ռազմաարդյունաբերության ոլորտում գործակցության մասին ստորագրված համաձայնագիրը: Այն հնարավորություն տվեց թուրքական կողմին սեփական զինուժը համալրելու նորագույն սպառազինությամբ և տեխնոլոգիաներով: Բացի այդ, ԱՄՆ-ի և եվրոպական մի շարք երկրների կողմից Թուրքիայի սպառազինության մատակարարման հարցում կիրառված արգելանքը իսրայելական ռազմաարդյունաբերական ընկերությունների համար սեփական արտադրանքը Թուրքիայում իրացնելու հնարավորություն տվեց[18]:

1997 թ. հունիսի 11-13-ը Իսրայելի նախագահ Վեյցմանը պաշտոնական այց կատարեց Անկարա: Թուրքիայի նախագահ Դեմիրելի և թուրքական այլ պաշտոնյաների հետ հանդիպման ժամանակ նա կոչ արեց զարգացնել թուրք-իսրայելական հարաբերությունները և չտրվել արաբական երկրների

[17] Nachmani A., Turkey: facing a new millenium: coping with intertwined conflicts, Manchester University Press, 2003, pp. 222-224.

[18] Jung D., Picolli W., Turkey at the Crossroads: Ottoman Legacies and a Greater Middle East, London: Zed Books Ltd., 2001, pp. 163-164.

ճնշումներին: Դեմիրելն իր հերթին վստահեցրեց իր հրեա գործընկերոջը, որ ռազմական համագործակցության վերաբերյալ համաձայնությունները կմնան ուժի մեջ, և հարաբերություններն այդ ոլորտում կշարունակեն զարգանալ[19]: Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ իսրայելական ռազմական ինքնաթիռներին հնարավորություն ընձեռվեց սեփական զորավարժանքներն իրականացնելիս օգտվելու Թուրքիայի ռազմաբազաներից և օդային տարածությունից: Որոշակի առաջընթաց գրանցվեց նաև ռազմածովային ուժերի բնագավառում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետախուզական տեղեկատվության և տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին ռազմավարական գնահատականների փոխանակման մասին: Իսրայելական կողմը Թուրքիային օժանդակելու էր արաբական երկրների և Իրանի հետ իր սահմանների ամրապնդման գործում՝ ներառյալ սահմանային գոտիներում ռադիոտեխնիկական հետախուզության ցանցի բարելավումը: 1997 թ. հունիսի 16-ին 5 թուրքական ռազմանավեր տեղակայվեցին Հաֆայի նավահանգստում՝ համատեղ ռազմական վարժանքներից հետո[20]:

Թուրք-իսրայելական հարաբերությունների նման արագ բարելավման լույսով միանգամայն տրամաբանական էր հարևան երկրների խիստ արձագանքը Թուրքիայի քաղաքականության հանդեպ: 1997 թ. փետրվարին Եգիպտոսի, Սիրիայի և Սաուդյան Արաբիայի ղեկավարները հանդես եկան հայտարարությամբ՝ կոչ անելով Թուրքիային վերանայել իր դիրքորոշումը: Իրանը և Հունաստանը նույնպես հանդես եկան բողոքի նոտաներով: Թուրքիայի արտաքին գերատեսչության պատասխանը եղավ այն, որ այդ բողոքները «որևէ կերպ չեն վերաբերում Թուրքիային»[21]:

Սակայն, երկկողմ հարաբերությունների զարգացման հիմնական խոչընդոտը թուրքական պետության իսլամականացման կողմնակիցների բացասական դիրքորոշումն էր: 1996 թ. Ընթացքում՝ վարչապետ դառնալուց հետո, Ն. Էրբաքանը կարճ ժամանակահատվածում հասցրեց այցելել Թեհրան, Իսլամաբադ և Տրիպոլի, որտեղ վստահեցրեց Իրանի, Պակիստանի և Լիբիայի ղեկավարներին իսլամի հիմնարար

[19] Milliyet. 12.06.1997.

[20] Նույն տեղում, 17-18.06.0997:

[21] Նույն տեղում, 01.03.1997:

սկզբունքներին թուրքական կողմի հավատարմության և սիոնիզմի հանդեպ տածած ատելության մասին:

Ինչ վերաբերում է Իսրայելի հետ ռազմական համագործակցությանը, ապա իսլամականների կողմից այդ համագործակցության խաթարման փորձերը հանդիպեցին թուրքական զինվորականության ներկայացուցիչների դիմակայությանը: Թուրքական բանակի և իսլամականների միջև վեճն ավարտվեց նրանով, որ Թուրքիայի գլխավոր շտաբի հրամանատարի պահանջով Ն. Էրբաքանը հայտարարեց իր հրաժարականի մասին՝ չսպասելով իր ժամկետի ավարտին:

Տնտեսական համագործակցություն: Ռազմական համագործակցությանը զուգահեռ արդյունավետ զարգանում էր նաև թուրք-իսրայելական տնտեսական համագործակցությունը: 1997 թ. ապրիլին պայմանագիր ստորագրվեց թուրք-իսրայելական տնտեսական համագործակցության մասին, իսկ 1997 թ. վերջին Թուրքիայի վարչապետ Յիլմազը հայտարարեց, որ գնաճի հաղթահարման գործում Թուրքիան նախընտրում է «իսրայելական մոդելը»[22]:

Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման համար հատկապես արդյունավետ էր 1998 թ.: Տարվա սկզբից Իսրայելը սկսեց առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերել Թուրքիայում Հարավարևելյան Անատոլիայի զարգացման ծրագրի (GAP) հանդեպ (այդ ծրագրով նախատեսվում էր Եփրատ գետի վրա կառուցել Աթաթյուրքի անվան ամբարտակ, արդյունավետ դարձնել թուրքական ջրային ռեսուրսների օգտագործումը, զարգացնել Թուրքիայի ամենահետամնաց տարածաշրջաններից մեկը համարվող Հարավարևելյան Անատոլիան, արդիականացնել հողատարածքների ոռոգման համակարգը և այլն)[23]: Գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում առաջնակարգ տեխնոլոգիական հնարավորությունների տիրապետող Իսրայելը պատրաստ էր իր ռեսուրսներով կիսվելու Թուրքիայի հետ և նպաստելու նախագծի իրականացմանը:

Ամբարտակի կառուցման և Անատոլիայի այդ հատվածի ոռոգման գաղափարը խիստ բացասաբար ընդունվեց Սիրիայի կողմից՝ այն մտավախությամբ, որ ամբարտակի կառուցումը

[22] Նույն տեղում, 03.10.1997:

[23] Kolars Jh., Mitchell W., The Euphrates River and The Southeast Anatolia Development Project, Southern Illinois University, 1991, p. 2-3.

կնվազեցնի եփրատ գետով դեպի Սիրիա հոսող ջրային ռեսուրսների ծավալները: Մահմեդական որոշ երկրների կողմից թուրք-իսրայելական համագործակցությունը ևս քննադատության արժանացավ: Մասնավորապես 1998 թ. Թեհրանում Իսլամական համագործակցության կազմակերպության հանդիպման ժամանակ լսվեցին կարծիքներ առ այն, որ թուրք-իսրայելական համագործակցությունը Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզը վերանայելու փորձ է:

Հատկանշական է, որ 1998 թ. սեպտեմբերին Կահիրեում տեղի ունեցած Արաբական երկրների լիգայի արտաքին գործերի նախարարների հանդիպման (օրակարգային խնդիրների շարքում ներառված էր նաև թուրք-իսրայելական համագործակցությունը) ժամանակ նկատվեց թուրք-իսրայելական համագործակցության վերաբերյալ արաբական երկրների միասնական դիրքորոշման բացակայություն: Ավելին, խորհրդակցության ընթացքում քննադատություններ ուղղվեցին Քուրդիստանի աշխատավորական կուսակցությանն օժանդակող Սիրիայի Արաբական Հանրապետությանը՝ կոչ հղելով այդ օժանդակության դադարեցման անհրաժեշտության մասին: Այդ ամենն առաջացրեց սիրիական կողմի խիստ դժգոհությունը, որն էլ ավելի խորացավ այն բանից հետո, երբ արաբական երկրների մեծ մասը հրաժարվեց Սիրիայի և Լիբանանի կողմից պատրաստված օրինագիծն ընդունելուց, որով խիստ քննադատության էր ենթարկվում Թուրքիան: Նույնիսկ Պաղեստինի, Հորդանանի և Օմանի ներկայացուցիչները ելույթներով հանդես եկան առ այն, որ թուրք-իսրայելական համագործակցությունը որևէ վտանգ չի ներկայացնում արաբական աշխարհի համար[24]:

Թուրք-իսրայելական հարաբերություններում որոշակի սառեցում նկատվեց 2000-ական թթ. սկզբում, երբ պաղեստինյան հիմնախնդրի սրացման հետ կապված լարված իրավիճակ ստեղծվեց տարածաշրջանում[25]:

---

[24] Նույն տեղում, 19.09.1998:

[25] 1988 թ. Թուրքիան ճանաչեց պաղեստինյան պետությունը (տե՛ս International Journal of Middle East Studies. Febr. 1993, էջ 100): Սակայն, չնայած ճանաչմանը, Թուրքիայի և ՊԱԿ-ի հարաբերությունները շարունակում էին մնալ ոչ բարիդրացիական (մասնավորապես Արաֆաթի կողմից գլխավորվող ՊԱԿ-ը կասկածվում էր տարածաշրջանում Թուրքիայի հիմնական մրցակիցների հետ հարաբերությունների զարգացման մեջ: Մասնավորապես Անկարան կասկածում էր ՊԱԿ-ին 1970-80-ական թթ.

Թուրքիայի համակրանքը պաղեստինցիների հանդեպ առավել արտահայտվեց 2000 թ. վերջում, երբ սկսվեց երկրորդ ինթիֆադան: Հոկտեմբերին Թուրքիան ողջունեց Իսրայելի կողմից պաղեստինցիների հանդեպ իրականացված բռնությունը դատապարտող ՄԱԿ-ի ընդունած բանաձևը, իսկ նույն ամսվա վերջում Ստամբուլում տեղի ունեցած իսլամական տնտեսական կոնֆերանսում Թուրքիայի նախագահ Ա.Սեզերը խստորեն քննադատեց Իսրայելին[26]:

2002 թ. նոյեմբերին Թուրքիայում տեղի ունեցած ընտրություններում հաղթեց «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որի անդամների մեծ մասը նախկինում Էրբաքանի գլխավորած «Բարօրություն» կուսակցության անդամներ էին: Թեև «Արդարություն և զարգացում» կուսակցությունը չքննադատեց Իսրայելին, սակայն դրա անդամների մեծ մասը բացասաբար էր վերաբերվում Իսրայելի հետ հարաբերություններին: Միևնույն ժամանակ Էրդողանի կառավարությունը չէր պատրաստվում որևէ կերպ վերանայել թուրք-իսրայելական հարաբերությունները:

Այսպիսով, XX դարի վերջին և XXI դարի սկզբին թուրք-իսրայելական հարաբերություններն առանձնանում էին ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցության խորացմամբ, որտեղ նկատելի էին ռազմավարական և մարտավարական ընդհանուր հետաքրքրություններ և մոտեցումներ: 1990-ական թթ. տարբեր բնագավառներում թուրք-իսրայելական հարաբերություններում նկատվող առաջընթացը կարևոր իրողություն էր ոչ միայն հիշյալ երկրների քաղաքականության համար, այլև Մերձավորարևելյան տարածաշրջանում ուժերի հարաբերակցության առումով:

Թուրք-իսրայելական համագործակցությունը հնարավորություն տվեց Իսրայելին դուրս գալու քաղաքական մեկուսացումից, որում հայտնվել էր հրեական պետությունը տասնամյակներ շարունակ: Բացի այդ, այն դարձավ հակակշիռ սիրիա-իրանական դաշինքին: Վերջինս թուրքական և իսրայելական

քուրդ և հայ ահաբեկիչներին վերապատրաստելու գործում (տե՛ս Aras B. Palestinian-Israeli Peace Process and Turkey, Commack, N.Y, Nova Science Publishers. 1998, էջ 125): Միևնույն ժամանակ 1990-ական թթ. Թուրքիան շարունակում էր տնտեսական և քաղաքական օժանդակություն ցուցաբերել պաղեստինցի ժողովրդին:

[26] Middle East New Agency (Cairo). Oct. 26, 2000.

իշխանությունների կողմից դիտարկվում էր որպես լարվածության աղբյուր Մերձավորարևելյան տարածաշրջանում:

2000-ական թթ. սկզբում պաղեստինյան հակամարտության սրացումը, մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներում թուրքական իշխանությունների պաղեստինամետ դիրքորոշումը, 2002 թ. Թուրքիայում իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալը որոշ հակասություններ առաջ բերեցին թուրք-իսրայելական հարաբերություններում: Հիշյալ հակասությունները թուրքական իշխանությունները փորձում էին դիտարկել Իսրայելի հետ ստեղծված ռազմաքաղաքական և ռազմատնտեսական հարաբերություններից անկախ, ինչը, սակայն, ցանկալի արդյունք չտվեց: Ավելին, «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից քայլեր ձեռնարկվեցին մուսուլմանական աշխարհում սեփական հեղինակության բարձրացման ուղղությամբ, ինչը չէր կարող բացասաբար չանդրադառնալ թուրք-իսրայելական հարաբերությունների հետագա ընթացքի վրա:

Հայացք նետելով XX դարի վերջին, XXI դարի սկզբին սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունների վրա՝ կարող ենք փաստել հետևյալը.

- 1980-ական թթ. վերջը և 1990-ական թթ. սկիզբը նշանավորվեցին մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում և տարածաշրջանային զարգացումներում նկատելի փոփոխություններով, որոնք իրենց ազդեցությունն ունեցան XX դարի վերջին, XXI դարի սկզբին սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունների վրա:
- XX դարի վերջին, XXI դարի սկզբին հիշյալ հարաբերությունների հիմքում եղել են տարաբնույթ հիմնախնդիրներ (տարածքային, ջրային ռեսուրսների հետ կապված և այլն): Այդ հարաբերությունների վրա իրենց ազդեցությունն են ունեցել աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական ու տարածաշրջանային գործընթացներ և ներպետական զարգացումներ:
- Հիշյալ ժամանակահատվածում Սիրիա-Իսրայել և Թուրքիա-Իսրայել փոխառնչությունները կրել են փոփոխական բնույթ: Եթե նշված ժամանակահատվածի սկզբնական հատվածում և՛ սիրիա-իսրայելական, և՛ թուրք-իսրայե-

լական հարաբերություններում որոշ առաջխաղացում գրանցվեց, ապա 2000-ական թթ. սկզբում դրանցում նկատվեց որոշակի սառեցում:

- Սիրիա-իսրայելական հարաբերությունների համեմատ թուրք-իսրայելական առնչությունները շատ ավելի առաջ գնացին: Նկատվեցին դրական տեղաշարժեր Թուրքիայի և Իսրայելի միջև ռազմաքաղաքական և տնտեսական բնագավառներում, ինչը չի կարելի ասել սիրիա-իսրայելական հարաբերությունների մասով: